ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/224

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. ՄԿրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազի համայնքապետարան
Մասնակից՝ «Սասունասար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Ն. Ցականովայի,
«Սասունասար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Ստեփանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/16» ծածկագրով գնանշման հարցում, Ոսկեվազ համայնքի գլխավոր ճանապարների և մայթերի վերանորոգման, երկրորդական ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14310-2021 գրությամբ «Սասունասար» ՍՊԸ-ին

(այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազի համայնքապետարանի 31.08.2021թ.-ի թիվ 168 գրության հիման վրա, 06.09.2021թ.-ին «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 06.09.2021թ.-ին:

09.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/216 համարի ծածկագիրը:

22.09.2021թ.-ին և 24.09.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.09.2021թ.-ին:

2. ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազի համայնքապետարանը 31.08.2021թ.-ի թիվ 168 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ Արագածոտն մարզի Ոսկեվազի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀԱՄ-ՈՍԿ-ԳՀԱՇՁԲ-21/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքում «Սասունասար» ՍՊԸ-ն (այսուհետև՝ մասնակից) ճանաչվել է որպես ընթացակարգի ընտրված մասնակից:

Մասնակիցը սահմանված կարգով ծանուցվել է պայմանագրի կնքման վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում՝ տաս աշխատանքային օրվա ընթացքում, չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, պայմանագրի եվ որոկավորման ապահովումները, հետևաբար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը որոշել է «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/16» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/16» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սասունասար» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սասունասար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 09.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Սասունասար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14310-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ բանավոր կերպով ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/224 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Ոսկեվազ համայնքի գլխավոր ճանապարների և մայթերի վերանորոգման, երկրորդական ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների

ձեռքբերման նպատակով 16.07.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սասունասար» ՍՊԸ-ն:

ii. «Սասունասար» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանն մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/16» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 02.08.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպություն, ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Սասունասար» ՍՊԸ-ին:

iv. 12.08.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

v. Պատվիրատուն 14.08.2021թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով Մասնակցի stepanyan-andranik@rambler.ru էլ. փոստի հասցեին ներկայացրել է «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/16» ծածկագրով պայմանագրի նախագիծը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները և խնդրել է կնքել պայմանագիրը կամ հայտնել դիրքորոշում:

vi. Հանձնաժողովի 27.08.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Սասունասար» ՍՊԸ-ն սահմանված կարգով ծանուցվել է պայմանագրի կնքման վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում՝ տաս աշխատանքային օրվա ընթացքում, չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները, հետևաբար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Մասնակիցը զրկվում է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 06.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14310-2021 գրությամբ «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազի համայնքապետարանի կողմից Ոսկեվազ համայնքի գլխավոր ճանապարների և մայթերի վերանորոգման, երկրորդական ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 16.07.2021թ.-ին հայտարարված «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 9.4-րդ կետի համաձայն՝ Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազի համայնքապետարանի կողմից Ոսկեվազ համայնքի գլխավոր ճանապարների և մայթերի վերանորոգման, երկրորդական ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 16.07.2021թ.-ին հայտարարված «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի 02.08.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպություն, ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Սասունասար» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված 12.08.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Պատվիրատուն 14.08.2021թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով Մասնակցի stepanyan-andranik@rambler.ru էլ. փոստի հասցեին ներկայացրել է «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/16» ծածկագրով պայմանագրի նախագիծը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները և խնդրել է կնքել պայմանագիրը կամ հայտնել դիրքորոշում:

Հանձնաժողովի 27.08.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Սասունասար» ՍՊԸ-ն սահմանված կարգով ծանուցվել է պայմանագրի կնքման վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում՝ տաս աշխատանքային օրվա ընթացքում, չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները, հետևաբար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Մասնակիցը զրկվում է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազի համայնքապետարանի կողմից Ոսկեվազ համայնքի գլխավոր ճանապարների և մայթերի վերանորոգման, երկրորդական ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 16.07.2021թ.-ին հայտարարված «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 14.08.2021թ.-ին Բողոքաբերին ուղարկված ծանուցմամբ, վերջինիս տրված տասն աշխատանքային օրյա ժամկետը ավարտվում էր ոչ թե 27.08.2021թ.-ի ժամը 15:00-ին, այլ 27.08.2021թ.-ը ներառյալ, քանի որ Մասնակցի կողմից պայմանագրի ստորագրված տարբերակը ներկայացնելու համար ծանուցումը ստանալու պահից հաշված՝ Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետը լրանալու էր 27.08.2021թ.-ը ներառյալ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը 27.08.2021թ.-ին ժամը 15:00-ին հրավիրելով նիստ և «Սասունասար» ՍՊԸ-ին զրկելով պայմանագիր ստորագրելու իրավունքից, գործել է ոչ իրավաչափ, քանի որ մասնակցի կողմից պայմանագրի ստորագրված տարբերակը ներկայացնելու համար՝

Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետը լրանալու էր 27.08.2021թ.-ը ներառյալ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ օրենսդիրը, պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորությունները: Ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:

Ամբողջացնելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ, նման պայմաններում, եթե առկա է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների խախտում, ապա դրանից բխող ցանկացած գործողություն, ինքնաբերաբար դառնում է անհիմն կամ խախտմամբ կատարված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով իրավական և փաստական հանգամանքերի հաշվառմամբ՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա

մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև հրաժարվում է պայմանագիր կնքելուց: Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, կամ որ վերջինս հրաժարվել է պայմանագիր կնքելուց, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Սասունասար» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14310-2021 գրությամբ «Սասունասար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/224 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**